ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Աստրախանի հայոց վիճակային կոնսիստորիան իր 1887 թ. մարտի 27-ի № 621 հայտարարությամբ[1] էջմիածնի Մայր Աթոռի գրատանն է նվիրաբերել Աստրախանի հայոց երկսեռ դպրոցների ձեռագրական հավաքածուն՝ բաղկացած 118 մատյաններից։

Այդ 118 ձեռագրերը, համապատասխան ցուցակով, Սինոդի 1888 թ. դեկտեմբերի 30-ի № 4607 գրությամբ, որն ստորագրված է Սինոդի անդամ Արիստակես եպս. Սեգրակյանցի, ատենադպիր Ս. Մուշեղյանցի և գործավար Վ. Օհանջանյանցի կողմից, հանձնվել են ժամանակի մատենադարանապետ Սահակ աբեղա Գևորգյանին (Սահակ Ամատունի). կարգադրված էր՝ «մուծանել զայնս ի տումար գրատան ի մուտս»[2]։

Կից ցուցակը, որը վավերացված է Սինոդի անդամ Արիստակես Սեգրակյանցի ստորագրությամբ և խորագրված՝ «Ցուցակ գրչեայ գրեանց մատենադարանի երկսեռ դպրոցաց Հայոց Աստրախանայ՝ կազմեալ ի 1-ին յունվարի 1887 ամի»[3], անվանական մի պարզ ցանկ է, ուր, առանց մատենագիտական տվյալների, 1—113 հերթական թվահամարների ներքո արձանագրված են 118 ձեռագրեր։

Հերթական թվահամարների (1—113) և ձեռագրերի իրական քանակի (118) միջև նկատվող 5 միավորի տարբերությունը արդյունք է այն իրողության, որ № 21-ի տակ արձանագրված է 4 «Աւետարան» (+3), № 38-ի տակ՝ 2 «Ընշաւակ» (+1) և № 63-ի տակ՝ 2 «Ագաթանգեղոս» (+1)։ Դրանք, հետագա շարադրանքում, կարտահայտվեն տառային գործակից ունեցող թվահամարներով՝ 21ա—դ, 38ա—բ, 63ա—բ։

Արձանագրված 118 ձեռագրերից 114-ը (№№ 1—109) հայերեն են, իսկ մյուս 4-ը (№№ 110—113)՝ ռուսերեն։

Ձեռագրերն էջմիածին տեղափոխելու կապակցությամբ ցուցակագրելիս չեն պահպանվել դրադարանի գրքային ֆոնդում դրանց ունեցած նախկին թվահամարները և կրկին համարակալվել են ըստ ցուցակում զրաղեցրած հերթականության, նոր թվահամարները փակցնելով ձեռագրերի կոնակներին՝ ծածկելով հին թվահամարները։ Դրանք այսօր, սակավ բացառությամբ, վերականգնել այլևս հնարավոր չէ, մանավանդ որ ստուգման համար ձեռքի տակ չունենք համապատասխան ցանկ կամ ցուցակ։

Ձեռագրերն էջմիածին մուտք գործելուց հետո միախառնվել են այդ տարիներին տարբեր վայրերից հավաքված 337 այլ մատյանների հետ, վերադասավորվել, ենթարկվել թեմատիկ դասդասման, զգալիորեն հեռացել են միմյանցից և մուծվել գրատան «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ՝ ստանալով միանգամայն նոր թվահամարներ, որոնք նույնպես փակցվել են նախորդների վրա։ 1913 թ. փետրվարին «Գևորգյան» հավաքածուն միաձուլվեց գրատան ընդհանուր ֆոնդին՝ ենթարկվելով միասնական համարակալման, որով և Աստրախանի հավաքածուի ձեռագրերն էլ ավելի հեռացան միմյանցից։

Ջնայած թվահամարների այս բազմազանությանն ու ցուցակում ձեռագրերի ունեցած մատենագիտական տվյալների խիստ անբավարարությանը, մանրակրկիտ ստուգումները, այնուամենայնիվ, հնարավորություն ընձեռեցին միանգամայն որոշակիորեն ճշտել հավաքածուի հայերեն բոլոր 114 (№№ 1—109) ձեռագրերի և ռուսերեն՝ 4 (№№ 110—113) ձեռագրերից 3-ի (№№ 110—112) արդիական թվահամարները, որոնք և տալիս ենք ստորև բերվող հին և նոր թվահամարների համեմատական տախտակում։

Անորոշ է մնում ցուցակի № 113 ռուսերեն ձեռագրի՝ «Армянская литургия и крещение» ճակատագիրը։ Նման ձեռագիր Մատենադարանի այլալեզու ձեռագրերի ֆոնդում չի արձանագրված։ Այդպիսին չի նշված նաև էջմիածնի նախկին գրատան «Գևորգյան» հավաքածուի գույքամատյանում։

---

1 Մատենադարան. Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 24։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

Համեմատական տախտակ Աստրախանի հայոց երկսեռ դպրոցների գրադարանի ձեռագրերի հին և նոր թվահամարների (ըստ 1887 թ. ցուցակի)

1887 թ.	Մատենադարան Գնորդյան	Մատենադարան Արգի	1887 թ.	Մատենադարան Գնորդյան	Մատենադարան Արգի	1887 թ.	Մատենադարան Գնորդյան	Մատենադարան Արգի	1887 թ.	Մատենադարան Գնորդյան	Մատենադարան Արգի
1	482	3795	28	643	3521	57	346	2532	85	697	3317
2	543	3796	29	452	3098	58	704	3527	86	742	3029
3	671	3787	30	657	3128	59	557	3119	87	480	2545
4	672	3797	31	665	3133	60	564	2553	88	481	3110
5	539	2895	32	560	3015	61	695	3236	89	531	3513
6	618	2901	33	660	3231	62	587	2558	90	739	3390
7	681	2907	34	507	3302	63ա	613	3306	91	514	3209
8	740	3391	35	619	3517	63բ	614	3516	92	578	3218
9	646	3522	36	638	3519	64	472	3107	93	361	3000
10	415	2880	37	645	3387	65	656	3127	94	687	3136
11	446	2883	38ա	461	3101	66	668	3310	95	532	3213
12	407	2709	38բ	462	3102	67	345	3284	96	492	3740
13	522	3212	39	470	3105	68	347	2998	97	527	3512
14	439	3188	40	639	3520	69	395	3203	98	593	3200
15	434	2711	41	573	3018	70	387	2540	99	605	4471
16	498	2788	42	642	3308	71	583	2557	100	629	3732
17	694	2642	43	728	3028	72	412	3290	101	542	2793
18	546	2719	44	490	2546	73	731	3027	102	424	2542
19	440	2712	45	703	3526	74	506	3117	103	455	3383
20	467	2889	46	548	3008	75	729	3025	104	533	3514
21ա	377	2634	47	501	3112	76	576	2556	105	443	3208
21բ	380	2537	48	621	3023	77	397	3287	106	394	3201
21գ	384	3004	49	497	2787	78	733	3137	107	547	2549
21դ	378	3002	50	451	3097	79	574	3019	108	342	2397
22	538	2792	51	654	3126	80	545	2794	109	499	2789
23	404	3005	52	471	3106	81	489	2784	110	—	Ալ20
24	438	3295	53	552	2550	82	468	3006	111	—	Ալ21
25	332	2997	54	509	3508	83	540	2896	112	—	Ալ26
26	658	3129	55	388	4476	84	473	3208	113	—	—
27	487	3111	56	426	3292						

Թե երբ և ինչպես է գոյացել այս հավաքածուն կամ ովքեր են եղել նվիրատուները, բացարձակապես ոչինչ հայտնի չէ. չկան ոչ միայն համապատասխան արձանագրություններ, այլև՝ ձեռագրերի մեջ անմիջականորեն գրադարանին ընծայարերված լինելու փաստը հաստատող մակագրություններ։ Այս հանգամանքը հուշում է, որ հավաքածուն ինչ-որ տեղից պատրաստի վիճակում է փոխադրվել գրադարան և մտել նրա գրքային ֆոնդը։

Հակված ենք կարծելու, որ այս ձեռագրերը հենց այն մատյաններն են, որոնց մասին հիշատակում է Սարգիս Ջալալյանցն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության մեջ։ Խոսելով Աստրախան քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու մասին, Ջալալյանցը, իմիջիայլոց, գրում է. «Ի սմին զանգակատան անկեալ մնային անխնամ զանազան ձեռագիր և տպեալ մատեանք, ժողովեալք ի զանազան տեղեաց ի Յօվսէփայ արքեպիսկոպոսէ Արղութեանց։ Ի միջի սորայ էր և Մեկնութիւն Երգ Երգոցի Գրիգորի Նիւսացւոյ, գրեալ ի թվին Հայոց ՅԽԲ (893), զոր եգիտ նա ի Սանահին[4]։ Ես հանեալ անտի զբոլոր ձեռագիր և տպեալ մատեանս և սրբեալ ի փոշոյ, ցուցակագրեցի և զպատճէն ցուցակի առաքեցի

[4] Մատյանս Մատենադարան է մուտք գործել 1879 թվականին՝ ի շարս Ս. Ջալալյանցի 80-ից ավելի ձեռագրերի։ Տե՛ս մեր «Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գրքում հիշատակվող ձեռագրերը» հոդվածը («էջմիածին», 1972, № 6, էջ 62)։

ի Սուրբ Էջմիածին յանկորուստ պահպանութիւնս[5]։

Եթե դա այդպես է, ապա կարող ենք ասել, որ սուն հավաքածուն նախքան Աստրախանի հայոց երկսեռ դպրոցների գրադարանի հավաքածուն դառնալը, եղել է քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու սեփականությունը՝ հավաքված Հովսեփ արքեպիսկոպոսի կողմից ռուսահայոց նրա առաջնորդության տարիներին (1773—1800)։ Այդ մասին են վկայում ոչ միայն ձեռագրերից մի քանիսում Արղությանի թողած հիշատակագրությունները՝ կատարված 1771—1797 թթ., այլև Ղրիմից տեղափոխված մի շարք ձեռագրերի առկայությունը այս հավաքածուի մեջ։ Հարցը թեև պարզ է, սակայն իր վերջնական լուծումը կարող է ստանալ միայն Սարգիս Ջալալյանցի կազմած ցուցակի երևան գալուց հետո, որը հնարավորություն կտար համեմատություն կատարել։

Ստորև, ըստ ձեռագրերում եղած ավելի վաղ հիշատակագրությունների ու կնքադրոշմների, տալիս ենք այն բոլոր անձանց ու հաստատությունների անվանացանկը, ովքեր երբևէ տնօրինել են նշված ձեռագրերին՝ մինչև դրանց Աստրախանի հայոց երկսեռ դպրոցների գրադարան մուտք գործելը։

Աբրահամ, ԺԸ դ. (կնքադրոշմ)—1 (№ 77/3287)[6]։
Աբրահամ աբեղա, Աստրախան, 1769 թ.—1 (№ 6/2901)։
Աբրահամ եպս., ԺԷ դ.—1 (№ 44/2546)։
Աբրահամ Կրետացի, 1720 թ.—1 (№ 22/2792)։
Աբաեես, Մալազկերտ, 1554 թ.—1 (№ 71/2557)։
Ալեքսան, ԺԸ դ.— 1(№ 76/2556)։
Ալեքսան վրդ., Բստոն Ս. Նշան, 1667 թ.—1 (№ 60/2553)։
Ալեքսան, Տեր, ԺԸ դ.—1 (№ 42/3308)։
Ալեքսիանոս, ԺԶ դ.—1 (№ 71/2557)։
Ամիր-Հասան, ԺԷ դ.—1 (№ 44/2546)։
Անդրեաս, ԺԷ դ.—1 (№ 8/3391)։
Աննայի վանք, 1471 թ.—1 (№ 49/2787)։
Անտոն կր., ԺԷ դ.—1 (№ 78/3137)։
Առաքել եպս., Էջմիածին, 1640 թ.—1 (№ 108/2397)։
Ասիլ ոսկերիչ, Ղրիմ, ԺԴ դ.—1 (№ 4/3797)։
Ասլան, պրն. Կաֆա, 1594 թ.—1 (№ 15/2711)։
Աստվածատուր, որդի Ավագի, Կալկաթա, 1798 թ.—1 (№ 19/2712)։
Աստվածատուր Սպանանցի, Քաշեր գյուղ, Գողթն, 1695 թ.—1 (№ 82/3006)։
Աստվածատուր քհն., Կաֆա, 1434 թ.—1 (№ 54/3503)։
Աստրախան, 1636 թ.—1 (№ 21բ/2537)։
Աստրախան, Ս. Աստվածածին եկեղեցի—118 (ճիշտ քանակը կարող է որոշվել Ս. Ջալալյանցի կազմած ցուցակի հայտնաբերումից հետո)։
Ավետիս, 1610 թ.—1 (№ 20/2889)։
Ավետիս երեց, ԺԷ դ.—1 (№ 74/3117)։
Ավետիս, Տեր, ԺԸ դ.—2 (№№ 61/3236, 105/3208)։
Ավետիք խոջա, Ղազան, 1642 թ.—1 (№ 21գ/3004)։
Ավետիք Ջուղայեցի, Լվով, Նոր-Ջուղա, 1634—1635 թթ.—2 (№№ 9/3522, 37/3387)։
Ավետիք քհն., 1737—1757 թթ.—2 №№ 23/3005, 82/3006)։
Բաղդասար աբեղա, 1753 թ.—1 (№ 61/3236)։
Բաղշիսարայ, 1716 թ.—1 (№ 103/3383)։
Բարսեղ, Ջգրաշեն, ԺԷ դ.—2 (№№ 27/3111, 39/3105)։
Բերոն խոջա, 1670 թ.—1 (№ 45/3526)։
Բստոն Ս. Նշան, 1668 թ.—1 (№ 60/2553)։
Գեորգ Նախիջևանցի, Պետերբուրգ, 1743 թ.—1 (№ 26/3129)։
Գոչա վանք, 1748 թ.—1 (№ 44/2546)։
Գրիգոր, 1622—1629 թթ.—1 (№ 103/3383)։
Գրիգոր, 1785 թ.—1 (№ 40/3520)։
Գրիգոր, պրն., Սպանան (Նոր-Ջուղա), 1692 թ.—1 (№ 63ա/3306)։
Գրիգոր վրդ., Ս. Առաքելոց վանք, Բերկրի, 1421 թ.—1 (№ 106/3201)։
Գրիգոր Տարոնցի, 1645 թ.—1 (№ 12/2709)։
Գրիգոր, Տեր, ԺԸ դ.—1 (№ 58/3527)։
Գուլղաղ, Փաշավանք, 1663 թ.—1 (№ 34/3302)։
Դանիել վրդ., 1766 թ.—1 (№ 31/3133)։
Դանիել, Տեր, 1729 թ. (կնքադրոշմ)—1 (№ 104/3514)։
Դավիթ վրդ., ԺԴ դ.—1 (№ 95/3213)։
Դավիթ վրդ., Նոր Ջուղա, Ս. Ամենափրկիչ, 1692—1725 թթ.—2 (№№ 63ա/3306, 67/3284)։
Դավիթ Ցղենցի, Կաֆա, 1766 թ.—1 (№ 94/3136)։
Եզեկիել քհն., 1750 թ.—1 (№ 47/3112)։
Եփրեմ կրդ., Էջմիածին, 1810 թ.—1 (№ 97/3512)։
Զաքար աբեղա, Անկունյաց վանք, 1476 թ.—1 (№ 102/2542)։
Զաքեոս, ԺԶ դ.—1 (№ 71/2557)։
Էջմիածին, Մայր Աթոռի գրատուն, ԺԸ—ԺԹ դդ.

---

5 Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, հ. Բ, Վաղարշապատ, 1858, էջ 440։

6 Փակագծերի առջևում նշված թիվը ցույց է տալիս ձեռագրերի քանակը։ Փակագծերում բերված թվերից առաջինը 1887 թ. թվահամարն է, իսկ երկրորդը՝ արդի։

—2 (ՄՄ 11/2883, 65/3127)։ Ձեռագրերի վրա մակագրված է. «Ս. Էջմիածնի է»։
Թադեոս, 1731 թ.—1 (Մ 72/3290)։
Թադեոս նեռկարար, Կաֆա, ԺԴ դ.—1 (Մ 4/3797)։
Թոմաս, 1756 թ. (կնքադրոշմ)—1 (Մ 17/2642)։
Ամպոլիս, 1698 թ.—1 (Մ 79/3019)։
Խաչատուր աբեղա, Նոր-Ջուղա, ԺԸ դ.—1 (Մ 67/3284)։
Խաչատուր երեց, Նոր Ջուղա, 1639 թ.—1 (Մ 13/3212)։
Խաչիկ Կաֆայեցի, Վաշարեն, Հունգարիա, 1647 թ.—1 (Մ 36/3519)։
Մերիկ դպիր, 1630 թ.—1 (Մ 28/3521)։
Կարապետ բազաղ, Ղրիմ, ԺԴ դ.—1 (Մ 4/3797)։
Կարապետ Կեղեցի, ԺԸ դ.—1 (Մ 5/2895)։
Կարապետ քհ., ԺԴ դ.—1 (Մ 2/3796)։
Կարապետ քհ., Վարազ, 1480 թ.—1 (Մ 15/2711)։
Կաֆա, Ս. Հրեշտակապետաց եկեղեցի, 1594—1750 թթ.—3 (ՄՄ 12/2709, 15/2711, 50/3097)։
Կոստանդին Պենեսրնցի, Սկևռա, 1314 թ.—1 (Մ 49/2787)։
Կոստանդնուպոլիս, 1735—1747 թթ.—3 (ՄՄ 48/3023, 66/3310, 68/2998)։
Հակոբ, ԺԴ դ.—1 (Մ 3/3787)։
Հակոբ, ԺԷ դ.—1 (Մ 84/3108)։
Հակոբ Թիֆլիզեցի, ԺԸ դ.—1 (Մ 41/3018)
Հակոբ Կ. Պոլսեցի, Կ. Պոլիս, 1781 թ.—1 (Մ 83/2896)։
Հակոբ վրդ., Նոր Ջուղա, 1663 թ.—1 (Մ 17/2642)։
Հայրապետ քհ., 1645 թ.—1 (Մ 92/3218)։
Հարություն երեց, 1721 թ.—1 (Մ 78/3137)։
Հարություն Խաչատրյան Սպանեցի, Նոր Ջուղա—Աստրախան, 1734—1768 թթ.—2 (ՄՄ 35/3517, 51/3126)։
Հովակիմ, Տեր, Կաֆա, ԺԷ դ.—1 (Մ 29/3098)։
Հովհաննես (Հովան), 1400 թ.—1 (Մ 52/3106)։
Հովհաննես, ԺԷ դ.—1 (Մ 104/3514)։
Հովհաննես, ԺԸ դ.—1 (Մ 76/2556)։
Հովհաննես, բռռ Դողմիշի, ԺԷ դ.—1 (Մ 17/2642)։
Հովհաննես երեց, Նոր Ջուղա, 1667 թ.—1 (Մ 80/2794)։
Հովհաննես Սրգնկացի, ԺԴ դ.—1 (Մ 107/2549)։
Հովհաննես կր., ԺԷ դ.—1 (Մ 78/3137)։
Հովհաննես Համաղանցի, Մարսվան, 1788 թ.—1 (Մ 25/2997)։
Հովհաննես վրդ., Արախիշ գյուղ, 1568 թ.—1 (Մ 21բ/2537)։
Հովհաննես վրդ. Սյունեցի, Կաֆա, ԺԸ դ.—1 (Մ 36/3519)։
Հովհաննես, Տեր, 1585 թ.—1 (Մ 21ա/2634)։
Հովհաննես, Տեր, 1757 թ. (կնքադրոշմ)—1 (Մ 82/3006)։
Հովհաննես, Տեր, 1764 թ.—1 (Մ 34/3302)։
Հովհաննես, Տեր, ԺԹ դ.—1 (Մ 31/3133)։
Հովհաննես Փառակեցի, Աստրախան, 1784 թ.—1 (Մ 10/2880)։
Հովհաննես քհ. Թոխաթեցի, 1758 թ.—1 (Մ 47/3112)։
Հովհաննես քհ., Զինիփաթան, 1728 թ.—1 (Մ 77/3287)։
Հովսեփ աբեղա, 1439 թ.—1 (Մ 70/2540)։
Հովսեփ Արղության, Աստրախան, 1771—1797 թթ.—5 (ՄՄ 17/2642, 30/3128, 38ա/3101, 66/3310, 76/2556)։
Հունան եպս., Վարդանաշատ, 1500 թ.—1 (Մ 21դ/3002)։
Մանվել, Տեր, ԺԸ դ. (կնքադրոշմ)—1 (Մ 15/2711)։
Մատթեոս աբեղա, ԺԸ դ.—1 (Մ 42/3308)։
Մատթեոս, Տեր, 1748—1749 թթ.—1 (Մ 58/3527)։
Մարդար Խոշենց, Պետերբուրգ, 1790 թ.—1 (Մ 7/2907)։
Մարգարե վրդ., ԺԵ դ.—1 (Մ 89/3513)։
Մարիամ Քիլիցի, Քիլի, 1653 թ.—1 (Մ 60/2553)։
Մարկոս մանտեսի, 1697 թ.—1 (Մ 64/3107)։
Մարտիրոս, Աղթամար, 1463 թ.—1 (Մ 16/2788)։
Մարտիրոս Ղրիմեցի, Կարին, 1668 թ.—1 (Մ 43/3028)։
Մելիք, որդի Կոկոն Թիֆլիզեցու, 1731 թ.—1 (Մ 102/2542)։
Մելիքսեթ երեց, որդի Ալեքսանի, 1728 թ.—1 (Մ 21դ/3002)։
Մելիքսեթ վրդ., ԺԷ/ԺԸ դդ.—1 (Մ 64/3107)։
Մելքոն, պրն., Նոր Ջուղա, 1663 թ.—1 (Մ 17/2642)։
Մինաս, ԺԷ դ.—1 (Մ 33/3231)։
Մինաս, Կ. Պոլիս, 1767 թ.—1 (Մ 22/2792)։
Միրաք, ԺԸ դ.—1 (Մ 76/2556)։
Միքայել վրդ., 1689 թ. (կնքադրոշմ)—1 (Մ 108/2397)։
Նազարեթ խոջա, Նոր Ջուղա, 1650 թ.—1 (Մ 62/2558)։
Նաղաշ, ԺԸ դ.—1 (Մ 63բ/3516)։
Ներսես մանտեսի, ԺԷ դ.—1 (Մ 98/3200)։
Ներսես վրդ., 1728 թ.—1 (Մ 21դ/3002)։
Նիկողոս, Տեր, Թիֆլիս, 1788 թ.—1 (Մ 45/3526)։
Նոր Ջուղա. Ս. Ամենափրկիչ, 1725, 1752 թթ. (կնքադրոշմ)—2 (ՄՄ 17/2642, 67/3284)։
Շամբրյանց, ԺԹ դ.—1 (Մ 18/2719)։
Շերմատան, 1670 թ.—1 (Մ 45/3526)։

Ոսկան Հովհաննիսյանց. Երևան. 1852 թ.—1 (№ 100/3732).
Պարսամ Թիֆլիզեցի, Տեր. ԺԸ դ.—1 (№ 102/2542).
Պետրոս վրդ., Նուկենց, Ասատպատի Ս. Ստեփանոսի վանք, 1706 թ. (կնքադրոշմ)—1 (№ 97/3512).
Պետրոս վրդ., Գոչա վանք, 1750 թ. (կնքադրոշմ՝ 1731 թ.)—1 (№ 44/2546).
Պետրոս վրդ., ԺԸ դ. (կնքադրոշմ)—6 (№№ 9/3522, 27/3111, 47/3112, 61/3236, 63բ/3516, 84/3108).
Պողոս, Տեր, ԺԸ դ.—1 (№ 98/3200).
Ռայիս Պարոնիկ, ԺԴ դ.—1 (№ 3/3787).
Սանակ, 1667 թ.—1 (№ 16/2788).
Սանակ սրկ., 1609 թ.—1 (№ 28/3521).
Սամվել աբեղա, 1702 թ.—1 (№ 8/3391).
Սամվել քհ., ԺԹ դ.—1 (№ 70/2540).
Սանանին, Ս. Աստվածածին, 1665, 1797 թթ.—2 (№№ 57/2532, 106/3201).
Սատաղա, Բոլորաբերդ անապատ, 1475 թ.—1 (№ 21ա/2634).
Սարդիս, ԺԲ դ.—1 (№ 109/2789).
Սարգիս, 1644 թ.—1 (№ 33/3231).
Սարգիս, Տեր, 1775 թ. (կնքադրոշմ)—1 (№ 44/2546).
Սեթ, 1333 թ.—1 (№ 71/2557).
Սեանա անապատ, ԺԹ դ.—1 (№ 31/3133).
Սիմեոն, ԺԷ դ.—1 (№ 85/3317).
Սիմեոն և կինը՝ Ալմաս, Կաֆա, 1681 թ.—1 (№ 50/3097).
Սիմեոն կր., Ս. Հակոբա վանք, 1419 թ.—1 (№ 106/3201).
Սիմեոն Անեմ տիրացու, Ղարասու, 1753 թ.—1 (№ 32/3015).
Ստեփաննոս, ԺԲ դ.—1 (№ 109/2789).
Սաեփաննոս երեց, 1719 թ.—1 (№ 90/3390).
Ստեփաննոս Տեր, 1610 թ.—1 (№ 20/2889).
Սուֆիաս, ԺԷ/ԺԸ դդ.—1 (№ 53/2550).
Սուֆիաս, Տեր, 1439 թ.—1 (№ 70/2540).
Վարդան, 1784 թ.—1 (№ 87/2545).
Վարդան վրդ., ԺԷ դ.—1 (№ 97/3512).
Վարդան արհեպս., Կաֆայեցի, Կաֆա, 1694 թ.—1 (№ 59/3119).
Վարդանան, որդի Եզգիբարի, 1745 թ.—1 (№ 21ա/2634).
Վարգեմայր, մայր Իստակենի, Ս. Վասիլ, ԺԳ դ.—1 (№ 81/2784).
Վրդանես վրդ., Կալկաթա, 1798 թ.—1 (№ 19/2712).
Տիրատուր վրդ., ԺԴ/ԺԴ դդ.—2 (№№ 57/2532, 70/2540).
Տուած Պարոն, ԺԴ դ.—1 (№ 1/3795).
Յողիկ, Այրիվանք, 1190 թ.—1 (№ 1/3795).
Քիլիթ եկեղեցի, 1653, 1786 թթ.—2 (№№ 60/2553, 65/3317).

ՕՆՆԻԿ ԵԳԱՆՅԱՆ